սան, Ֆրանկլէն Բուլոնի միջոցով, փնտռում էր քեմալականների բարեկամութիւնը՝ անգամ Կիլիկիան պարպելու գնով։ Իտալիան բացայայտ կերպով օգնում էր Անատոլուի ըմբոստներին։ Մեծ օգնութիւն էր ցոյց տալիս և Խորհրդ. Ռուսաստանը. «բոլշևիկեան բանակը, գրում էր օգոս. 16-ին Քեազիմ Կարաբեքիրը, իր թշնամիներին քայքայելու և բնաջնջելու շրջանում է գտնուում։ Մեր ժողովուրդը վկայ պէտք է լինի և յունական բանակի փլուզումին։ Բացի այդ, 11րդ իսլամական բանակը (բոլշևիկեան) հասել է մեզ օգնութեան. նա անցել է մեր կովկասեան սահմանը։ Մեր դաշնակից բոլշևիկները անընդհատ մատակարարում են մեզ զէնք ու ռազմամթերք։ Կարող ենք վստահ լինել, որ վատ օրերը մեզ համար անցել են արդէն»։

Սակայն, մասամբ բոլշևիկների ազդեցութեան տակ և մասամբ, յունական ճակատի դէպքերի փոփոխութեան հետևանքով, այլ և այն պատճառով, որ Հայաստանի ձեռն ու ոտը փաստօրէն կապուած էր Խորհրդային Ադրբէջանի և բոլշևիկների կողմից, գուցէ և ներքին հակամարտութիւններից դրդուած՝ Մուստաֆա Քեմալը վարանում էր վճռական գործողութիւնների անցնելու։ Ընդհակառակը, Քեազիմ Կարաբեքիրը պահանջում էր անյապաղ պատերազմ յայտարարել Հայաստանին։ Ըստ երևոյթին, այս հողի վրա սուր տարակարծութիւն կար միլլիական երկու պետերի միջև։ Այս տեսակէտից, չափից աւելի հետաքրքրական վաւերագիր է «Էնկիւրիի ազգային կառավարութեան սպայակոյտի պետ գնդ. Ըմէթի» 1336թ. (1920) օգոս.1 նամակը՝ ուղղուած «Նորին գերազանցութեան 15րդ զօրաբաժնի և հայկական ճակատի հրամանատար Քեազիմ Կարաբեքիր փաշային».

«Ձերդ գերազանցութիւն, գրում էր Ըմէթը, Ներկայացուցչական Ժողովը Մուստաֆա փաշայի նախագահութեան տակ, ծանօթանալով Ձեր և Սելահէդդին բէյի Ազգային Մեծ Ժողովին ներկայացրած հիմունքներին և գտնելով ամէն կասկածից դուրս ձեր հայրենասիրական զգացմունքը, որ ապացուցած է ձեր գործերով էլ, յանձնարարեց ինձ միանգամ էլ հաղորդել ձեզ հետևեալը։

Ներկայացուցչական Ժողովը, հակառակ մեր վիճակի թուլութեան, այլ և Ցունաստանի յանկարծական յարձակման, պահելով հաւատն ու պազարիւնութիւնը՝ չի ընկճուում, որովհետև իրերի նման դրութիւնը նախատեսուած էր դեռ Էրզրումի խորհրդաժողովից և համապատասխան միջոցներ էլ ձեռք էին առնուած։

Դուք տեսնում էք դրագրութիւնից, մեր և բարձր հրամանատարութեան միջև, որ այն դէպքերը, որոնք պիտի վճռեն մեր ժողովրդի և նոյնիսկ ամբողջ մահմեդական աշխարհի և իսլամութեան ճակատագիրը, պիտի ունենան եւրոպական, այլ և կենտրոնական-ասիական նշանակութիւն։ Այդ երկրներում արիւնը շարունակում է հոսել այժմ էլ։ Թիւրք բանակը գոհերի գնով պէտք է ապահովէ մեր ժողովրդի ազատութիւնը, որ խոստացել է նրան։

Իրերի այս վիճակում բոլոր հայրենասէրները, խմանալով ձեր անջատ գործունէութեան ձգտումը՝ վհատուում են։ Դուք գտնուում էք ըստ ամենայնի մեր յարգանքի և վստահութեան արժանի երկու զօրաբաժինների գլուխը։ Մինչդեռ մեր թշնամիները, իրենց նզովեալ բարեկամների հետ, սպասում են մեր ուժերի պառակտման և մեր միութեան խախտման. նրանց ուրախացնում է ամէն մի երևոյթ այդ ուղղութեամբ։